

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N° 2**  
**«14» փետրվարի 2019 թ. թիվ ԲՆ-ԴՇ-19/08 պայմանագրի**

**ք.Երևան**

**«\_\_\_» «\_\_\_\_\_» 2019թ.**

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Զիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Ֆարգադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1792-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/08» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

- 1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/08» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝
- 1.1.1. Պայմանագրի 1.1 կետում «**71 051 900 (յոթանասունմեկ միլիոն հիսունմեկ հազար ինը հարյուր)**» բառերը փոխարինել «**73 869 100 (յոթանասուներեք միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար մեկ հարյուր)**» բառերով:
- 1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝ ա) 3-րդ կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում «26351900» թիվը փոխարինել «29169100» թվով, բ) «Ընդամենը» տողում «71051900» թիվը փոխարինել «73869100» թվով:
- 1.1.3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°2-ի «ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր» աղյուսակում «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի «Տարի» սյունյակի «71051900» թիվը փոխարինել «73869100» թվով:

**2. Այլ պայմաններ**

- 2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**Շրջակա միջավայրի նախարարություն**

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք  
ՖՆ գործառնական վարչություն  
ՀՀ 900011006211  
ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության  
գլխավոր քարտուղարի ժ/պ

**Վ.Զիլավյան**

(ստորագրություն)

**Կ.Տ.**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**«Արփի լիճ» ազգային պարկ ՊՈԱԿ**

Շիրակի մարզ, գ.Աշոցք  
ՖՆ գործառնական վարչություն  
ՀՀ 900018002908  
ՀՎՀՀ 05536278

«Արփի լիճ» ազգային պարկ ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ

**Ա.Ֆարգադյան**

(ստորագրություն)

**Կ.Տ.**